ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 138-Ա **25 փետրվարի 2026 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ԶԻՆՎՈՐ-2026» ԽՈՐԱԳՐՈՎ ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում 12-րդ դասարանի արական սեռի աշակերտների միջև 2026 թվականի մարտի 9-16-ն անցկացնել «Պարտաճանաչ զինվոր-2026» խորագրով շարադրության մրցույթ:

2 . Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում «Պարտաճանաչ զինվոր-2026» խորագրով շարադրության մրցույթն անցկացնող և ամփոփող կազմկոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ անցկացնել մրցույթը և լավագույն մեկ շարադրություն ներկայացնել հանձնաժողովին:

4. Կազմկոմիտեին (նախագահ Կ. Զազյան)՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ մրցույթի անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը հանրակրթական դպրոցներ:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

25.02.2026

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37101840503 Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թ. փետրվարի 25-ի
N 138.2 որոշման

Կազմ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում «Պարտաճանաչ զինվոր-2026» խորագրով շարադրության մրցույթն անցկացնող և ամփոփող կազմկոմիտեի

Զազյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Չքոյյան Արփիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Արփինե Ջրաղացպանյան - Կարմիրգյուղի Հ 2 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-02-25 15:09:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
08428824
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ